տրոսին գտի զմեկնութիւն Յովհաննու աւետարանին երկաթագիր 600 ամաց, զոր արարեալ է Նանայի ասորւոց վարդապետի, և ապա թարգմանեալ ի հայս։ Ես կարծէի թէ այն էր պարոն աղասիին, բայց այն է հէքիմ ծառուրին, զոր և ետ ինձ առաքել ի վանս, և ես ետու ովսաննային բերել ընդ իւր։ Բաց յայսմանէ ետ ինձ հէքիմ ծառուրն զխորհրդատետր մի ձեռագիր իբր 500 ամաց, բայց ոչ կամեցաւ առաքել զայն ի վանս, զի գուցէ (ասէ) գնացեալ իմ ի վանս՝ տաց զայն ձեռամբ իմով։ Ի գնալն մեր ի լիբանան գտաք առ հայ կրօնաւորս զմեկնութիւն մատթէի աւետարանին ողջոյն անսխալագիր, զոր արարեալ է Ներսէսի շնորհալւոյն. և այն էր գրեալ ի վաղուց։ Բազում ականատեսք պատմեն, թէ բազում ձեռագիրք են ի վանս, որ ի լեառն պչնոյ յերկրին երևանոյ, և ի լերինն աղբատոյ, և յայլևայլ տեղիս, մանաւանդ ի վանս ճուղայու։ Ասեն բազումք թէ կաթուղիկոսն հայոց տպարան է բացեալ յէջմիածին՝ տպել զպատմագիրս հայոց, նաև զայլ գրեանս։...

Որպէս գրեալ եմ յայլ թուղթս եկն ի պասրա վարդապետ մի ի նախավկայի վանուց որ ի հին ճուղայ, և ժողովեալ աւելի քան զ400 թուման սաղտ փող՝ թող զայլ պէսպէս ոսկեղէն և արծաթեղէն զարդս, կամեցաւ գնալ ի ճուղայ նոր։ Պարոն Ստեփաննոսն ասաց ինձ, եթէ կամիս գրեա զգիր մի առ առաջնորդն ճուղայու առ մկրտիչ վարդապետն, զի գտեալ ի ճուղայ զձեռագիր պատմագիրս առաքեսցէ այսր. քանզի բազում պատմագիրք գտանին անդ։ Եւ ես յանձն առեալ գրեցի զգիր մի խրթին յոյժ, զորոյ օրինակի առեալ պարոն ստեփաննոսն եցոյց միում ի հայոց՝ թէ զայս գտի ի հին ձեռագիրս։ Իսկ նորա զարմացեալ ընդ խրթնութիւն նորա, ասէ՝ թէ զայս գիր գրեալ է Նարեկացին, կամ այլ ոք ի նախնի հարց հայոց։ Իբրև ասաց նմա պարոն ստեփաննոսն, թէ զայս գրեաց վարդապետն մեր, ասէ, այս առաւել է քան զամենայն։... Բայց թուղթն ոչ գնաց ի ճուղայ, զի փոխեցաւ միտք վարդապետին չերթալ ի ճուղայ...։

Յամի տեառն 1770 *ի մայիսի* 11 — *Նուաստ ծառայ*

ի Պասրա — *Հ. Միքայէլ Չամչեանց*

ՄՂԵ.

Կարևոր տեղեկագրութիւն մ'է՝ Անտոնեան Միաբանութեան այս թուականիս մէջ անցուցած կեանքին շուրջ։

Գերապատիւ աբբահօր մերում տեառն տեառն Ստեփաննոս քարունապետի համբուրիւ աջոյն ողջոյն ի Քրիստոս

Յաւուրս յայսոսիկ եկին երկու կրօնաւոր քահանայք ի լեռնէն լիբանանու. անուն մեծին անդրէաս, և անուն միւսոյն մատթէոս. սոքա եկեալ ի պասրա ի յունիսի 6 գնացեալ էին առ Կուռնելիոս եպիսկոպոսն։ Իսկ նորա ազդ արարեալ ստեփան աղային ասէ, ես չունիմ սոցա տեղի, ուր դիցուք զնոսա. եթէ կամիս՝ իջցեն ի տան քում առ վարդապետին։ Եւ նորա առաքեալ զորդի իւր զաղայ պետրոսն առ եպիսկոպոսն՝ ասէ. նախ հարցուք զվարդապետն. եթէ հաճոյ իցէ նմա, գնասցեն անդ։ Եւ աղայ պետրոսն (որ է ամաց չորեքտասանից) առանց ծանուցանելոյ ինչ՝ առեալ եբեր զնոսա ի տուն իմ։ Եւ ես բազում մարդասիրութեամբ ընկալայ զնոսա, և հանգուցի զնոսա՝ հոգացեալ զամենայն պիտոյս նոցա. և որ ինչ էր ի ձեռին իմում արարի նոցա և տանեմ ճշմարիտ և անկեղծ սիրով. և ետու եւ նոցա զտասն պատարագիս...։ Ծանուցին ինձ զվախճան զալստեան իւրեանց, այսինքն է ժողովել զդրամս ի պէտս վանաց իւրեանց, և ի վճարումն պարտուց իւրեանց։ Հինգ ամօք յառաջ (ասաց Հ. Անդրէասն) ես, և հայր աբբահամն առաքեցաք ի մեծաւորաց մերոց և ի կաթուղիկոսէն յայս վախճան. հայր աբբահամն գնացեալ ի հնդկաստան և ես յայլ կողմանս. և յետոյ առեալ ընդ իս զհայր մատթէոսն եկի ի պաղ-